

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

7 փետր. № 1262. Ուղարկուեց Ս. Էջմիածնի Մայր Տաճարի լուսարարապետի անունով, տիկին Վարվառէ Քանանեանի նուիրաբերած արծաթէ ոսկեզօծ խաչը պահելու Մայր Տաճարում և առաջադրուեց ստացման մասին տեղեկութիւն տալ նուիրատու Տիկնոջը.

7 փետր. № 1263. Թոյլ տրուեց Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վարչութեանը կառուցանել Տիկին Վարվառէ Քանանեանի երեսուն հազար ռուբլի նուիրաբերութեամբ մանկավարժական թանգարանի շինութիւն Ճեմարանի գաւթի հիւսիս-արևմտեան կողմում.

7 փետր. 1266. Մայր Աթոռի Տպարանի վարչութեան անունով առաջադրութիւն՝ դպիր Արշակ Դաւթեանին ճանաչել նոյն վարչութեան անդամ.

8 փետր. № 1273. Օրհնութեան և գոհունակութեան

թուղթ տրուեց Տիկին Վարվառէ Քանանեանի անունով Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի գաւթում մանկավարժական թանգարանի շինութեան համար երեսուն հազար ռուբլի նուիրաբերելու առթիւ։

8 փետր. № 1274. Ղարաբաղի Վիճակային Կոնսիստորիայի անունով առաջադրութեամբ հաստատուեցին Շուշուայ գաւառի Խնածախ գիւղի Հայոց եկեղ.-ծխական դպրոցի հոգաբարձութեան նորընտիր անդամներն ու անձնափոխանորդները։

8 փետր. № 1275. «Սուրհանդակ» օրաթերթում լոյս տեսած «Դատապարտելի անտարբերութիւն» վերնագրով յօդուածի առթիւ Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի նախագահողին առաջադրուեց՝ յորդորել Տփխիսի Հայոց քահանաներին չզլանալ յաճախելու բարեգործական ընկերութեան ժողովներին, ուր հրաւիրուում են նաև քահանաները կազմելու համար աղքատախնամ մասնաժողովներ։

10 փետր. թ. № 1281. Ի նկատի ունենալով, որ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի երգեցողութեան ուսուցիչ ու Մայր Տաճարի խմբապետ Տ. Կոմիտաս վարդապետը, որ անցեալ հոկտեմբերի վերջերին պէտք է վերադարձած լինէր Մայր Աթոռ իւր պաշտօնները շարունակելու, ցարդ չէ վերադարձել և յայտնի չէ, թէ երբ կը վերադառնայ,—առաջադրուեց Ճեմարանի վարչութեանը Տ. Կոմիտաս վարդապետին 1910 թուի նոյեմբերի 1-ից արձակուած համարել Ճեմարանի երգեցողութեան ուսուցչի և Մայր Տաճարի խմբապետութեան պաշտօններից և այդ պաշտօնների համար հրաւիրել այլ ձեռնհաս և հայկական ու եւրոպական ձայնագրութեան հմուտ ուսուցիչ-խմբապետ։

10 փետր. № 1290. Մակագրութեամբ Երևանի Հայոց Փոխ Թեմական յայտարարութեան վերայ, որին կցած է և Երևան քաղաքի որբանոցի Կանոնադրութեան հայերէն և ռուսերէն օրինակները, պատուիրուեց Մ. Ա. Տպա-

ռանին՝ ձրիաբար տպագրել իւրաքանչիւրից երեք հարիւրական օրինակ և ուղարկել Տ. Փոխ թեմակալին։

11 փետր. № 1301. Տեղեկութիւն տրուեց Ս. Էջմիածնի Սինոդին, թէ Տ. Զաւէն վարդապետը Ղարաբաղի Կոնսիստորիայի նախանդամ է կարգուել և առաջադրուեց կարգադրութիւն անել նորա ռոճկի և այլ կարևորութիւնների մասին։

11 փետր. № 1302. Առաջադրուեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի Տ. Նախագահողին՝ յանդիմանել Տփխիսի Բարսեղ քահանայ Բարսեղեանին, որ ձրիապէս ծննդեան քաղուած չէր տուել իւր չքաւոր ծխականներից մէկին։

21 փետր. № 2308. Մակագրութեամբ յանձնելով Սինոդին ուսուցիչ Ռուբէն Մանասեանի խնդիրն ու վկայականները, առաջադրուեց Սինոդին, խնդրատուի ցանկութեան համեմատ նրան ի չարս միաբանութեան ընդունելու համար տնօրինել հարկաւորը օրինասահման կարգով։

22 փետր. № 1312. Առաջադրուեց Ս. Էջմիածնի Սինոդին ուղարկել Կովկասի Տ. Փոխարքայի ամուսին Պայծառափայլ Կոմսուհի Ելիսավետա Անդրէևնայի անունով մի հարիւր ռուբլի նպաստ Մայր Աթոռի կողմից Թուրքեստանի շրջանի երկրաշարժից տուժածների օգտին։

22 փետր. № 1314. Ուղարկելով Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի վարչութեան անունով, երկաթուղու անդորրագիրը (դուբլիկատ) առաջադրուեց ստանալ երկաթուղու «Էջմիածին» կայարանից մի արկղ գրքեր, որ հանգուցեալ Պետրոս Սիմէոնեանի կտակի համաձայն ուղարկել է ճեմարանին Տ. Եղնիկ աւագ քահանայ Երզնկեանը։

22 փետր. № 1315. «Մեղու Հայաստանի» լրագրի 25-ամեակի արծաթեայ պսակը, որ հանգուցեալ Պետրոս Սիմէոնեանի կտակի համաձայն ուղարկել է Տ. Եղնիկ աւագ քահանայ Երզնկեանը, յանձնուեց Տ. Խաչիկ Ծ. վարդապետին և առաջադրուեց պահել Մայր Աթոռի թանգարանում։

22 փետր. 1911 թ. № 1319. Առաջադրուեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի Տ. Նախագահողին պ. Նահանգապետի համաձայնութիւնը հարցնելուց յետոյ կարգել Տփխիսի Յովհաննէս աւագ քահանայ Մարտիրոսեանին Կոնսիստորիայի անդամ։

24 փետր. № 1322. Առաջադրուեց Ս. Էջմիածնի Սինոդին արձակուած համարել Տ. Եղիշէ վարդապետ Ահարոնեանին Նուխուայ վիճակի փոխանորդութեան պաշտօնից և պատուիրել նրան ինչպէս յաջորդարանի, նոյնպէս և Ղարաբաղի առաջնորդարանի գործերն ու կահկարասիքը յանձնել Հոգևոր Կառավարութեան և Կոնսիստորիային պատշաճ եղանակով և գալ Մայր Աթոռս. այլ և պատուիրել Նուխուայ Հոգևոր Կառավարութեան մինչև նոր փոխանորդի կարգումն նրա ռոճիկն ուղարկել Սինոդ։

24 փետր. № 1324. Առաջադրուեց նոյն Սինոդին շրջաբերական հրամաններով պատուիրել վիճակային բոլոր կոնսիստորիաներին, որ այսուհետև ամուսնալուծական գործերի քննութեան ժամանակ ի նկատի ունենան և քննեն, թէ արդեօք ամուսինները քանի արական կամ իգական զաւակ ունեն, ով պէտք է խնամէ մինչև չափահաս դառնալը և առհասարակ հոգայ նրանց դաստիարակութեան և կրթութեան մասին։ Եւ այդ տեղեկութիւնները յիշատակել Սինոդի զեկուցման մէջ։

25 փետր. № 1331. Ղարաբաղի Վիճակային Կոնսիստորիայի անունով առաջադրութեամբ Մեսրոպ քահանայ Ապրեսեանը կարգուեց Կոնսիստորիայի անդամ։

27 փետր. № 1335. Տարօնի Տ. Առաջնորդի գրութեան վերայ մակագրութեամբ առաջադրուեց Ս. Էջմիածնի Սինոդին՝ Մայր Աթոռի դանձարանում աւանդդրած հանգուցեալ Բ. Պօպովեանի կտակի տոկոսների գումարից երկու հազար ռուբլի ուղարկել յիշեալ առաջնորդին Պօպովեան վարժարանի շինութեան համար։

27. փետր. № 1338. Վրաստանի Հայոց Կոնսիստոռ-

րիայի Տ. Նախագահողին առաջադրուեց յայտնել Ցաճկա-հայ սովելոց Տփխիսի Նպաստամատոյց յանձնաժողովին, որ Կովկասեան Տ. Փոխարքան յարգելով ի Տէր հանգուցեալ Տ. Մատթէոս Բ. Հայրապետի 1910 թուի հոկտեմբերի 25-ի, № 2295 միջնորդութիւնը, 1911 թուի փետրուարի 23-ի, № 3821 գրութեամբ թոյլ է տալիս Տփխիսի Նպաստամատոյց Ցանձնաժողովին շարունակել մի տարի ևս հանգանակութեան գործը։

ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԴԻՐՆԵՐԻՑ

2 Փետրուարի, թ. 85. Սինոդը լսելով Ներքին գործերի պ. Նախարարի 1910 թ. Նոյեմբերի 22-ի № 10792 առաջադրութիւնը որոշեց. շրջաբերական հրամանով պատուիրել բոլոր Կոնսիստորիաներին, որ նախ՝ եթէ ուղղափառ դաւանութիւնից հայ-լուսաւորչական դաւանութիւն անցած մի անձն, որի պսակը, նրա յանցաւորութեան պատճառով լուծուած է ուղղափառ եկեղեցու վճռով, ցանկանում է նորից պսակուել Հայ եկեղեցու ծիսով, ոչ ուղղափառ դաւանութեան անձնաւորութեան հետ, այդ դէպքում նրա առաջին պսակի լուծման մասին կայացած ուղղափառ հոգևոր Ատեանի վճիռը չէ կարող ծառայել իբրև արգելք նրան, իսկոյն և եթ նոր պսակի թոյլտուութիւն տալու վերաբերմամբ, և այդ թոյլտուութիւնը ամբողջովին կախուած է այն կանոններից, որ ընդունուած են հայ եկեղեցու դաւանութեամբ, և երկրորդ՝ եթէ ուղղափառ եկեղեցու վճռով լուծուած է մի զոյգի պսակ, որոնցից երկուսն էլ պատկանում են այդ եկեղեցուն, այդ դէպքում ամուսնական անհաւատարմութեան մէջ մեղաւոր ճանաչուած անձի համար նշանակուած եկեղեցական ապաշխարանքը պահում է իւր նշանակութիւնը մինչև այն